ԱԳՈՐԱ Լրատու

ՄԱՐՏ 6 - 17 2015 Թ. ԹԻՎ 5 (2060)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Աջակցություն համագործակցության խորացման հարցում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այսօր ընդունել է Հայաստանում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մաքարոնին:

Ողջունելով հյուրին՝ նախարարը գոհունակություն է հայտնել գյուղատնտեսության ոլորտում երկկողմ համագործակցության ներկա մակարդակով: «Մենք շատ բարձր ենք գնահատում Ձեր ջանքերը հայ-լիբանանյան բարեկամական կապերի ամրապնդման գործում, քանի որ Լիբանանը մեզ համար շատ կարևոր գործընկեր է, որն ունի նաև մեծ հայկական համայնք», - նշել է նախարարը: Դեսպան Ժան Մաքարոնն, իր հերթին, նախարարին է հղել Լիբանանի գյուղատնտեսության նախարար Աքրամ Շահիբի ողջույնը և առաջիկայում Լիբանան այցելելու հրավերը՝ երկրի գյուղատնտեսական նորամուծություններին ծանոթանալու համար: Նա նաև տեղեկացրել է, որ լիբանանյան ընկերություններից մեկը ցանկություն է հայտնել, բարեգործական նպատակներով, Աշտարակ քաղաքին նվիրաբերել շուրջ 20 հազար եղևնու տնկիներ, որոնց համար արդեն հատկացված է հողատարածք:

Նշելով, որ առաջիկայում նախատեսվում է Լիբանանի գյուղատնտեսության նախարարի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որի կազմում կլինեն շուրջ 50 լիբանանցի գործարարներ՝ դեսպանը համոզմունք է հայտնել, որ այցը հրաշալի առիթ կարող է հանդիսանալ գյուղատնտեսության բնագավառում հայ-լիբանանյան նոր գործարար կապերի հաստատման և դեպի Հայաստան լիբանանյան կապիտալի ներհոսքի համար:

Նախարարը նույնպես ընդգծել է ագրարային ոլորտում երկկողմ հարաբերությունների խթանման համար նմանատիպ այցերի կարևորությունը՝ շեշտելով, որ, որպես ներդրման հնարավոր ուղղություն, առաջնահերթ դիտարկում է անասնապահության ոլորտը (մասնավորապես՝ ոչխարաբուծությունն ու թռչնաբուծությունը):

Կիրականացվեն ջրամատակարարման ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է գերմանական KfW բանկի ծրագրերի ղեկավար Սանդրա Սոարես դա Սիլվայի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարը բարձր է գնահատել KfW բանկի հետ համագործակցությունը: «Գյուղատնտեսությունը մեր երկրի գերակա ուղղություններից է, իսկ առանց ոռոգման խնդիրի լուծման, անհնար է ապահովել ոլորտի զարգացումը: Վերջին տարիներին, KfW բանկի հետ ակտիվ համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման շնորհիվ, մեզ հաջողվել է բավական լուրջ առաջընթաց գրանցել ջրամատակարարման ոլորտում», – նշել է նախարարը: Այնուհետև Ս.Կարապետյանը համառոտ ներկայացրել է ոլորտի ներկա վիճակը, մատնանշել առաջնահերթությունները, որոնց շարքում, մասնավորապես՝ առանձնացրել է նոր ջրամբարների կառուցման, ոռոգման համակարգում նորագույն տեխնոլոգիաների ներդրման հարցերը: KfW բանկը Հայաստանում իրականացնում է ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման մի շարք ծրագրեր, այդ թվում՝ Կապսի ջրամբարի վերակառուցումը, ինչը հնարավորություն կտա ավելացնել Շիրակի մարզի հողօգտագործողների ոռոգման ջրի պահանջարկի բավարարման ծավալները:

Նախարարն առաջարկել է բանկի ներկայացուցիչներին՝ ուսումնասիրություններ կատարել և քննարկել իրենց ծրագրերում նաև Մաստարայի ջրամբարի կառուցումը ընդգրկելու հնարավորությունը:

☞2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Տնտեսական համագործակցության զարգացում

Շարունակվում է վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Քուվեյթի Պետություն:

ՀՀ կառավարության ղեկավարն առանձնազրույց է ունեցել Քուվեյթի իր գործընկերոջ՝ վարչապետ Ջաբեր Ալ-Մուբարաք Ալ-Համադ Ալ Սաբահի հետ, ինչին հաջորդել է ընդլայնված կազմով հանդիպումը: Քուվեյթի կառավարության ղեկավարը շնորհակալություն է հայտնել Հովիկ Աբրահամյանին՝ իր հրավերն ընդունելու և Քուվեյթ պաշտոնական այց կատարելու համար, նաև համոզմունք հայտնել, որ Հովիկ Աբրահամյանի այցը նոր լիցք կհաղորդի տնտեսական բնագավառում կապերի զարգացմանն ու ընդլայնմանը:

Հովիկ Աբրահամյանը շնորհակալություն է հայտնել Քուվեյթի վարչապետին հրավերի համար և վստահություն հայտնել, որ այս այցը լավագույնս կծառայի երկու բարեկամ ժողովուրդների միջև կապերն առավել ամրապնդելու ու տարբեր ոլորտներում փոխշահավետ գործակցությանը նոր թափ հաղորդելու համար: Հովիկ Աբրահամյանը և Ջաբեր Ալ-Մուբարաք Ալ-Համադ Ալ Սաբահը քննարկել են տնտեսության տարբեր ճյուղերում, այդ թվում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, ենթակառուցվածքների, զբոսաշրջության և այլ ոլորտներում հնարավոր երկկողմ ծրագրերի իրականացմանն առնչվող մի շարք հարցեր:

☞2

Անտառկառավարման ազգային համակարգ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի նոր ղեկավար Աննե Դորիթ Քեմփային: Ողջունելով հյուրին՝ նախարարը կարևորել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԳՄՀԸ «Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի միջև վերջին տարիներին ձևավորված արդյունավետ համագործակցությունը:

«Մեզ հաջողվել է անտառային ոլորտում գրանցել զգալի առաջընթաց, ինչին մեծապես նպաստել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը: Համոզված եմ, որ ձեր պաշտոնավարման ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության հարաբերությունները ԳՄՀԸ-ի հետ նոր թափ կստանան», – նշել է նախարարը:

Հանգամանորեն անդրադառնալով ընկերության հետ վերջին տարիներին իրականացրած համատեղ ծրագրերին՝ նախարարը մասնավորապես նշել է, որ այդ ժամանակահատվածում գործարկվել է անտառային պետական մոնիտորինգի հզորացման ծրագիրը, որի շրջանակում, տիեզերական պատկերների վերծանման և վերլուծության միջոցով, ներդրվել է հեռահար զոնդավորման համակարգը, անտառային տնտեսությունները հագեցվել են որոշակի տեխնիկական կարողություններով: Բացի այդ, նախաձեռնվել են հանրային իրազեկման պիլոտային ծրագրեր, մշակվել է անտառկառավարման ազգային տեղեկատվական համակարգը, որը թույլ կտա՝ անտառների կառավարմամբ և պահպանությամբ զբաղվող բոլոր հաստատություններին, ստանալ ճշգրիտ և թարմ տեղեկատվություն:

☞2

Գյուղմթերքի արտադրության կին-հերոս - 2015 Էջ 4

Մասնագետի խորհուրդը Էջ 5

Հայկական օրգանական մթերքը «Պրոդէքսպո-2015-ում» Էջ 6

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Տնտեսական համագործակցության զարգացում

1



Հայաստանի վարչապետը Քուվեյթի իր գործընկերոջը պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան:

Հանդիպումից հետո, Հովիկ Աբրահամյանի և Ջաբեր Ալ-Մուբարաք Ալ-Համադ Ալ Սաբահի ներկայությամբ, Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության կառավարությունների միջև ստորագրվել են զբոսաշրջության և գյուղատնտեսության բնագավառներում 2015-2017 թթ. համագործակցության գործնական ծրագրեր: Հայկական կողմից փաստաթղթերը ստորագրել են ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը և ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, քուվեյթյան կողմից՝ Առևտրի և արդյունաբերության նախարար Աբդուլմոհսեն Ալ-Մեդեհիջը և Քուվեյթի վարչապետի առաջին տեղակալ, արտաքին գործերի նախարար Շեյխ Սաբահ Խալեդ Ալ-Համադ Ալ-Սաբահը:

Անտառկառավարման ազգային համակարգ

1

Երկկողմ համագործակցության հեռանկարային ուղղությունների թվում Սերգո Կարապետյանը հիշատակել է անտառկառավարման պլանների մշակման հնարավորությունը, անտառային հողերի հաշվառման հետ կապված՝ տեխնիկական միջոցների տրամադրումը, անտառների կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության համար իրավական դաշտի մշակումը, անտառտնտեսություններին ամենագնացների, հակահրդեհային սարքերի, անօդաչու միջոցների տրամադրումը, ինչպես նաև՝ արոտավայրերի քանակական և որակական տվյալների գնահատումը և գյուղատնտեսական վարելահողերի մոնիթորինգը:

Ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար Աննե Դորիթ Քեմփան իր հերթին վստահեցրել է նախարարին, որ ԳՄՀԸ ծրագրերը Հայաստանում կկրեն շարունակական բնույթ, և համոզմունք է հայտնել, որ միասնական ուժերով կհաջողվի լուծում տալ ոլորտի առջև ծառացած խնդիրներին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Կիրականացվեն ջրամատակարարման ծրագրեր

1

Նախարարը կարևորել է նաև հանրապետությունում խմելու ջրի կառավարման, արդյունավետ օգտագործման և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հարցը՝ հավելելով, որ այդ հարցում ևս բանկից ակնկալում է աջակցություն: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Սանդրա Սոարես դա Սիլվան տեղեկացրել է, որ ներկայումս քննարկումներ են ընթանում ստորգետնյա ջրերի կառավարման համակարգերի ծրագրի ներդրման վերաբերյալ, որում առաջնայնությունը տրվելու է Արարատյան դաշտավայրին: Բացի այդ, նրա խոսքով՝ առաջիկայում նախատեսվում է գերմանացի փորձագետների այցը Հայաստան՝ ջրային ռեսուրսների գնահատման, արդյունավետ օգտագործման և գույքագրման փորձը ներկայացնելու նպատակով:

Հանդիպման ավարտին՝ կողմերը ևս մեկ անգամ ընդգծել են համագործակցության ընդլայնման և հարաբերությունների սերտացման պատրաստակամությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Ջրամատակարարումն արդեն սկսվել է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով Արմավիրի մարզում էր՝ անձամբ հավաստիանալու, որ մարզում ոռոգման սեզոնի բացմանն ընդառաջ, պատասխանատուների կողմից պատշաճ կերպով իրականացվել են բոլոր նախապատրաստական աշխատանքները: Նախարարին ուղեկցում էին Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ֆելիքս Մելիքյանը, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների տնօրեններ և այլ պաշտոնատար անձինք:

Այցի շրջանակում, նախարարը եղել է Հուշակերտի պոմպակայանում, Շենավան, Գետաշեն, Նալբանդյան համայնքներում, որտեղ ծանոթացել է ներտնտեսային ոռոգման ցանցերի աշխատանքներին: Այստեղ պատասխանատուները հավաստիացրել են, որ բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, և իրենք լիովին պատրաստ են ոռոգման սեզոնի բացմանը:

Շուրջ 6 հազար հեկտար փաստացի ոռոգվող տարածք ընդգրկող «Մերձափնյա» ՋՕԸ գործադիր տնօրեն Արշավիր Հայրապետյանը տեղեկացրել է, որ ՋՕԸ-ի կողմից սպասարկվող 16 համայնքներից տասում այս պահին ընթանում են նախապատրաստական վերջին աշխատանքները, մնացած 6-ում առկա որոշակի տեխնիկական խնդիրները կվերացվեն մեկշաբաթյա ժամկետում:

Այնուհետև նախարարն ուղևորվել է Մրգաշատի միջտնտեսային ջրանցք: Այստեղ բնակիչները դժգոհություն են հայտնել այն մասին, որ ջրանցքում երկար տարիներ չեն կատարվել մաքրման աշխատանքներ: Նախարարը հանձնարարել է անհապաղ սկսել մաքրման գործընթացը, և դրանց արդյունքների վերաբերյալ զեկուցել իրեն: Արմավիրի մարզում նախարարի այցելության վերջին կանգառը՝ Զարթոնքի պոմպակայանում էր, որտեղ, շրջայցի ընթացքում, նախարարը տեղեկացել է, որ վերանորոգման աշխատանքներն արդեն ավարտված են, և պոմպակայանը լիովին պատրաստ է ջրամատակարարման շրջանին:

«Արմավիրի մարզում կատարված դիտարկումը ցույց տվեց, որ ոռոգման համակարգում նախատեսված վերանորոգման և նախապատրաստական աշխատանքները գրեթե ամբողջությամբ ավարտված են: Ընդհանուր առմամբ, հանրապետության ամբողջ ոռոգման համակարգն արդեն իսկ պատրաստ է սեզոնի մեկնարկին»,- նշել է նախարարը:

Ըստ Ս. Կարապետյանի՝ հանրապետության ցածրադիր գոտիներում, մասնավորապես՝ Արարատի և Արմավիրի մարզի մի շարք համայնքներում, որտեղ վեգետացիան ավելի վաղ է սկսվում, ջրամատակարարումն արդեն իսկ սկսված է: Թեպետ ավանդաբար ոռոգման սեզոնը մեկնարկում էր ապրիլ ամսից, սակայն, հաշվի առնելով ընթացիկ տարվա եղանակային պայմանները՝ հանձնարարական էր տրված վերանորոգման և այլ նախապատրաստական աշխատանքներն ավարտին հասցնել մինչև մարտի 1-ը, համակարգը բերել աշխատունակ վիճակի՝ գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար:

Այցի ավարտին՝ նախարարը խորհրդակցություն է անցկացրել Խոյի ջրօգտագործողների ընկերությունում, որին ներկա էին ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների տնօրենները, Արմավիրի մարզի թվով ինը ՋՕԸ-երի պետերը, Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը, մարզային կառույցի ղեկավարները, ոլորտի այլ պատասխանատուներ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են դիտարկման արդյունքում հայտնաբերված թերացումները և ոռոգման ոլորտում առկա խնդիրները: Նախարարը նշել է, որ հաշվի առնելով նախորդ տարվա դժվարություններն ու գյուղացիական տնտեսությունների արդարացի դժգոհությունները, պետք է այս տարի գործընկերային հարաբերություններ ստեղծվեն գյուղացիական տնտեսությունների հետ՝ բացառելու հետագա դժգոհությունները՝ կապված արդար ջրաբաշխման հետ: Նախարարը հանձնարարել է պատասխանատուներին, սեղմ ժամկետներում, քայլեր ձեռնարկել դրանց շուտափույթ շտկման ուղղությամբ:

Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները դիտարկելու նպատակով, նախարարն այցելել է նաև Արարատի մարզ:

Այցի սկզբում նախարարը հետևել է «Արարատ 1» և «Արմաշ»-ի ինքնակարգավորվող թվայնացված պոմպակայանների աշխատանքների ընթացքին, որոնք սպասարկում են շուրջ 1800 հեկտար ոռոգելի հողատարածքներ: Ինչպես տեղեկացրել են նախարարին, երկու պոմպակայանն էլ պատրաստ են ոռոգման սեզոնին և, անհրաժեշտության դեպքում, անմիջապես ձեռնամուխ կլինեն ջրամատակարարմանը:

Այնուհետև նախարարն այցելել է 16 կմ երկարություն ունեցող «Հրազդան-Արաքս»-ից սկիզբ առնող «Ձախ ճյուղ» ջրանցք: Պատասխանատուները համոզված են, որ այս տարի կատարված մաքրման աշխատանքները հնարավորություն կտան եռակի ավելացնել ջրի հոսքի ծավալները:

«Մարզի Արարատի տարածաշրջանում կային համայնքներ, որտեղ սակավաջրության պատճառով հողերի մի մասը չէր օգտագործվում: Այս տարի ջրանցքում մաքրման աշխատանքներ են կատարվել, որի շնորհիվ սահմանամերձ երեք համայնքներ՝ Սևակավանը, Երասխավանը և Արմաշն ամբողջապես կապահովվեն ոռոգման ջրով»,- նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը:

Նախարարի խոսքով՝ մարզում կատարված դիտարկումը ցույց է տվել, որ ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքներն ամբողջությամբ կատարված են և, առաջին իսկ պահանջի դեպքում, գյուղացիական տնտեսությունները կապահովվեն կայուն ջրամատակարարմամբ: Այցի շրջանակներում, նախարարն այցելել է նաև Արտաշատի ջրանցք, Վեդիի և Քաղցրաշենի պոմպակայաններ, որոնք նույնպես ոռոգման սեզոնին ընդառաջ, ամբողջությամբ բերվել են աշխատունակ վիճակի: Նախարարը եղել է նաև Արտաշատի խաղողի այգիներում և հետևել էտի ընթացքին:

Այնուհետև ՀՀ գյուղատնտեսության նախարարն Արտաշատում անցկացրել է աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցել են մարզի ջրառների պետերը, ՋՕԸ-երի պետերը, քննարկվել են շրջայցի արդյունքում բացահայտված թերացումներն ու ոռոգման ոլորտում առկա այլ խնդիրներ:

Խորհրդակցության ավարտին՝ նախարարը հանձնարարել է ոլորտի պատասխանատուներին՝ գյուղատնտեսական ամբողջ տարում իրականացնել անխափան ջրամատակարարում, նաև միջոցներ ձեռնարկել՝ ջրաբաշխման հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

Ագրոլրատու
Մարտ 6 - 17, 2015 թ.
թիվ 5 (2060)

ՈՌՈԳՈՒՄ

Կմիավորվեն մի շարք ջրօգտագործողների ընկերություններ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացել է ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կարգավորող խորհրդի նիստը, որը վարել է ՀՀ գյուղատնտեսության նախարար, խորհրդի նախագահ Սերգո Կարապետյանը:

«Ներկայումս հանրապետությունում գործում են 42 ջրօգտա-

գործողների ընկերություններ: Ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ քննարկումների արդյունքում, որոշվել է, որ ՋՕԸ-երի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար, անհրաժեշտ են որոշակի վերակազմավորումներ», - նշել է նախարարը: Նիստում մասնավորապես առաջարկվել է վերակազմակերպել և միավորել «Ամբերդ» և «Փարպի», «Մուսալեռ», «Ակնալիճ» և «Վաղարշապատ», «Հրազդան-Ջուր» և «Նաիրի», ինչպես նաև «Վայք» և «Եղեգնաձոր» ջրօգտագործողների ընկերությունները: Ոչ շահութաբեր ՋՕԸ-երի վերակազմավորումը թույլ կտա ոչ միայն տնտեսել զգալի ֆինանսական միջոցներ, այլ նաև ապահովել ֆինանսական մուտքերի ավելացում: Միաժամանակ նիստում ընդգծվել է, որ վերակազմակերպումը ջրօգտագործողների համար, ջրի արդարացի բաշխման խնդրում, խոչընդոտներ չի առաջացնի: Ջրօգտագործողների ընկերությունների միավորման մասին առաջարկությունն ընդունվել է միաձայն, կողմ քվեարկությամբ:

Սերգո Կարապետյանը շեշտել է, որ ինչպես և նախատեսվել էր, մարտի 1-ից հանրապետության ՋՕԸ-երը պատրաստ են ոռոգման սեզոնին, նաև հորդորեց՝ առավել մեծ ակտիվություն ցուցաբերել ջրօգտագործողների ընկերությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Գործընթացին առնչվող խնդիրների քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանն այցելել է Տավուշի մարզի տարածքում տեղակայված մի շարք ընկերություններ՝ ընթացիկ տարվա մթերումների գործընթացին առնչվող խնդիրների քննարկման նպատակով:

Փոխնախարարն, այցի շրջանակում, եղել է պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող՝ «Իջևանի գինու գործարանում», խաղող վերամշակող «Ագաթատ-Գոլդ», կաթ վերամշակող «Դիլի», պտուղբանջարեղենի վերամշակմամբ զբաղվող՝ «Մագա», «Էկոգարդեն արտադրական կորպորացիա» ընկերություններում, ինչպես նաև՝ Իջևան քաղաքում կառուցվող պտուղբանջարեղեն վերամշակող «Իջևան ֆուդ» ՍՊԸ-ում: Ընկերությունների ղեկավարների հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են նրանց գործունեության նախնական ծրագրերը, առկա խնդիրներն ու դրանց լուծման տարբերակները: Հատկապես կարևորվել է ընթացիկ տարվա գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացի կազմակերպման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման հարցը, ինչպես նաև գնված հումքի դիմաց գյուղացիական տնտեսություններին վճարումների ժամանակին կատարումը: Փոխնախարարը հորդորել է սկսել հումքի մթերման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետ գնման պայմանագրերի կնքման գործընթացը:

Սահմանամերձ Այգեպար և Այգեձոր գյուղական համայնքներում տեղակայված «Ագաթատ-Գոլդ» և «Էկոգարդեն արտադրական կորպորացիա» ՍՊԸ-ների ղեկավարներն իրենց գոհունակությունն են հայտնել կառավարությունից, սահմանամերձ գյուղական համայնքների տնտեսավարողների նկատմամբ հարկային արտոնություններ կիրառելու օրենսդրական նախաձեռնության համար:

ՎԱՅՈՑ ՁՈՐ

Բարձրացնել հողատարածքների օգտագործման մակարդակը

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանն այցելել է Վայոց ձորի մարզ և հանդիպել Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի աշխատակազմի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը, առկա խնդիրներն ու դժվարությունները, և այդ կապակցությամբ՝ ԳԱՄԿ-ի մասնագետների ու խորհրդատուների անելիքները: Փոխնախարարը հատուկ ընդգծել է մարզում գյուղատնտեսական նշանակության հողատարածքների օգտագործման մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ հավելելով, որ Վայոց ձորի մարզն, այս առումով, հանրապետությունում ամենավերջին տեղն է զբաղեցնում: Եվ դա այն դեպքում, երբ մարզի բնակլիմայական պայմանները թույլ են տալիս ընդլայնել մի շարք բարձրարժեք մշակաբույսերի արտադրությունը և հավելյալ արդյունք ապահովել:

Գառնիկ Պետրոսյանը, ԳԱՄԿ-ի մասնագետների ուղեկցությամբ, այցելել է նաև՝ Չիվա, Արենի, Աղավնաձոր համայնքներ, զրուցել այգեգործների հետ, հետևել պտղատու ծառերի և խաղողի վազերի էտի ու ձևավորման աշխատանքներին, տվել համապատասխան խորհուրդներ: Ընդհանուր առմամբ, փոխնախարարը դրական է գնահատել մարզում իրականացվող գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Համատեղ կատարված ծրագրեր

Վերջերս «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում տեղի ունեցավ հանդիպում Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության /GIZ/ պատվիրակության հետ՝ GIZ Հայաստանյան գրասենյակի նորանշանակ ղեկավար Աննե Դորիաթ Քեմփայի գլխավորությամբ: Հանդիպման նպատակը՝ ԳՄՀԸ, ծրագրի շրջանակներում, «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ 2010թ.-ից կատարված ծրագրերի քննարկումն էր:

ԱՊՄԿ ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Գյուլխասյանը համատեղ իրականացված ծրագրերի արդյունքում, ներկայացրել է կատարված ներդրումները և աշխատանքները.

Այդ համագործակցության արդյունքում՝ 2010-2011թթ. կենտրոնում ներդրվել է հեռահար զոնդավորման և GIS ծրագրային համակարգը, որը արբանյակային պատկերների վերլուծության համար նախատեսված համակարգչային ծրագիր է, և անհրաժեշտ է փաստել, որ այն իր հնարավորություններով առայժմ միակն է տարածաշրջանում:

Տրամադրված դրամաշնորհներով կենտրոնի համար ձեռք են բերվել նաև «ArcGIS 10» ծրագիրը, ՀՀ ամբողջ անտառային ֆոնդն ընդգրկող տարածքների արբանյակային պատկերները, տեխնիկական միջոցներ:

- 2011 թ.-ին իրականացվել են ընդհանուր անտառածածկ տարածքների առանձնացման և մակերեսի որոշման աշխատանքներ:
- 2012 թ. Տավուշի և Սյունիքի մարզերի 19 գյուղական համայնքների բնակչության շրջանում իրականացվել է անտառային ոլորտին առնչվող հանրային իրազեկման պիլոտային ծրագիրը:
- 2013 թ.-ին ՀՀ անտառային տարածքներում կատարվել են հատումների ինտենսիվության և անտառային վնասատուներով ու հիվանդություններով վնասված տարածքների վերաբերյալ դիտարկումներ, որն իրականացվել է արբանյակային պատկերների համապատասխան վերլուծությունների և դաշտային համադրումների միջոցով:
- 2014 թ.-ի աշնանը մշակվել է հրդեհների վերլուծության հեռահար զոնդավորման ավտոմատ գործիքը և հիմնականում օգտագործվելով /LANDSAT 8/ բազմասպեկտրալ արբանյակային պատկերները, վեր է հանվել հրդեհների տեղաբաշխման քարտեզը ՀՀ-ի տարածքում՝ 2013-2014թթ.-ի համար:

Ծրագրերի վերաբերյալ կազմակերպվել են մի շարք ուսումնական և վերապատրաստման դասընթացներ:

ԳՄՀԸ ԿԿԿ ծրագրի անտառկառավարման բաղադրիչների շրջանակներում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ներդրվել է «Ազգային անտառկառավարման տեղեկատվական համակարգը», որտեղ կտեղադրվեն նաև կենտրոնի կողմից իրականացված բոլոր գործառույթների արդյունքները: Մասնավորապես՝ ամրագրված 8 ցուցիչների մասով՝ գլխավոր ծառատեսակների տոկոսը (ընդհանուր անտառածածկ տարածքում), տարիքային խմբերը (հասուն և երիտասարդ ծառուտներ), անտառի լրիվությունը, անտառապատումը և անտառվերականգնումը:

2015թ.-ի սկզբին, կողմերը քննարկել և պատրաստում են հուշագիր՝ «Կայուն անտառկառավարում» թեմայով՝ կենտրոնի մասնագետների համար

վերապատրաստման ծրագրի իրականացման, միջազգային փորձի փոխանակման, ինչպես նաև, հնարավորության սահմաններում, կենտրոնը որոշակի ժամանակակից տեխնիկական միջոցներով համալրելու մասին:

Արդյունքում՝ երկկողմ պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության հետագա շարունակականության վերաբերյալ, ՀՀ-ում անտառների մոնիտորինգի համակարգի զարգացման և կայուն անտառկառավարմանը նպաստելու համար:

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն»
ՊՈԱԿ

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՑԱՆԿԱԼԻ Է ԸՆԴԼԱՅՆԵԼ ՇՈՒԿԱՆԵՐԸ

«Մեղրիում չիր պատրաստում են ինչպես ավանդական, այնպես էլ՝ էլեկտրական չորացման եղանակով: Տեխնոլոգիայի ներդրման գործում մեզ աջակցել է CARD հիմնադրամը: Էլեկտրական չորանոցները մեկ խմբաքանակում կարող են չորացնել 300 կգ թարմ միրգ, որից օրինակ՝ արքայանարնջի պարագայում ստացվում է 70 կգ չիր»,- ասում է Հասմիկ Խոսրովյանը: Նորագույն տեխնոլոգիայով չիր արտադրելը, ըստ Հասմիկի, արդյունավետ է, քանի որ փոքրանում է ձեռքի աշխատանքի ծավալը, իսկ սանիտարահիգիենիկ պայմաններում ստացվում է ավելի բարձրորակ և մաքուր չիր: Բացի այդ, կրճատվում է նաև աշխատաժամանակը, իսկ ստացված արտադրանքն աչքի է ընկնում թե՛ համային հատկանիշներով, և թե՛ արտաքին տեսքով: «Որքան կրճատվում է չորացման ժամանակահատվածը, այնքան պահպանվում են չորացվող մրգի վիտամիններն ու մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ մյուս միկրոտարրերը: Չրի արտադրությունում բուրավետիչներ և այլ հավելանյութեր չենք օգտագործում, ինչի արդյունքում ստացվում է բնապահպանորեն մաքուր սննդամթերք»,- հավելում է Հասմիկը: Մեղրիի բարձրորակ չիրն արտահանում են՝ Շվեյցարիա, Ռուսաստանի Դաշնություն, մի մասն էլ իրացվում է ներքին շուկայում (հիմնականում՝ սպառվում է Սուպեր-մարկետների միջոցով): «Մենք իրացման խնդիր չունենք, եթե ունենանք պատվերներ, կմեծացնենք արտադրության ծավալները»,- նշում է Հասմիկ Խոսրովյանը, ով նաև Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի անդամ է: Հասմիկին ուրախացնում է նաև այն հանգամանքը, որ աշխատատեղերի խնդիր ունեցող Մեղրիում գոնե սեզոնային աշխատատեղեր կստեղծվեն: Ինչ վերաբերում է հումքին, ապա մթերում և օգտագործում են իրենց այգիներում արտադրված միրգը: «Իհարկե, շատ լավ է, երբ մեր երկրում բարեգործություններ են արվում: Սակայն, կուզենայի, որ մեր երկիրն այնքան բարգավաճեր, որ բարեգործական միջոցառումները պարզապես ուղղվեին տոնակատարություններին, այլ ոչ թե սոցիալական խնդիրներ լուծեին»,- իր մտահոգությունն է հայտնում երիտասարդ գործարարը:

Լուսինե Պողոսյանը նույնպես Մեղրիի չիր արտադրողներից է: Մշակում է 3000 ք.մ. այգետարածք, որտեղ բազմազան մրգատեսակներ է աճեցնում (արքայանարինջ, նուռ, թուզ և այլն): Լուսինեն ինքն է էտում ծառերը, մաքրում չորուկներից, կատարում է բույսերի պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներ: Մասնագիտական գիտելիքները ձեռք է բերել CARD-ի կազմակերպած սեմինարների ընթացքում: «Նախատեսել եմ ընդլայնել այգետարածքս, նոր ծառատեսակներ, օրինակ՝ վաղահաս կեռաս աճեցնել: Եթե ընդլայնվի շուկան, կավելացնեմ նաև արքայանարնջի ծառերի քանակը, քանի որ մեր չիրն արդեն մեծ համբավ ունի: Ցանկալի է, որպեսզի ընդլայնվի նաև արտաքին շուկան»,- ասում է Լուսինեն:

Երիտասարդ գործարարը նոր ծրագրերի մասին է մտորում:

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

«Եթե մարդն աշխատում է, ուրեմն հույս ունի, որ լավ է լինելու, եթե հույս չունենա՝ չի աշխատի»,- ասում է Տավուշի մարզի «Դիլի» ՍՊԸ գլխավոր տնօրեն Աստղիկ Թամրազյանը: Նրա ղեկավարած ընկերությունը մասնագիտացած է կաթի վերամշակման ուղղությամբ: Պատրաստում են իտալական պանրատեսակներ և կաթնամթերքի հարուստ տեսականի:

Զուգահեռաբար զբաղվում են նաև տոհմային անասնաբուծությամբ, որն էլ հնարավորություն է տալիս արտադրությունը կազմակերպել սեփական հումքով: Արտադրված բարձրորակ կաթնամթերքն իրացվում է թե ներքին, և թե արտաքին շուկաներում (արտահանվում է հիմնականում Ռուսաստանի Դաշնություն): «Աշխատանքում ինձ աջակցում է ամուսինս, ով ղեկավարում է պանրի արտադրամասի գործունեությունը՝ աշխատանքի ծանրաբեռնվածությունը վերցնելով իր վրա»,- ասում է գործարարը: Աստղիկն ունի մեկ դուստր: Իր գնահատմամբ, ընտանիքում զբաղվածությունն այնքան էլ մեծ չէ: «Ամբողջ օրն անց եմ կացնում աշխատավայրում: Դիլիջանը ժամանցային քաղաք չէ: Այստեղ, աշխատանքից բացի, այլ զբաղվածություն գրեթե չես կարող ունենալ: Երեկոյան, տուն վերադառնալուց հետո, ձեռնամուխ եմ լինում ընտանեկան հոգսերին, որոնք ինձանից առանձնապես շատ ժամանակ չեն խլում: Ես ավելի շատ աշխատանքի մարդ եմ»,- նշում է Աստղիկը: Երեկոյան հավաքվում են ընտանիքի անդամներով թեյի սեղանի շուրջ, զրուցում են օրվա անցուդարձից, կարծիքներ փոխանակում, միմյանց խորհուրդներ տալիս: Կոլորիտային հայկական ընտանիքում ամեն ինչ հարթ է ընթանում, քանի որ տիրում է սիրո, հարգանքի և կամեցողության մթնոլորտ: «Տղամարդու համար կարիերա ստեղծելն ավելի հեշտ է, քան՝ կնոջ: Որպես կանոն, հայ կինը, մեղմ ասած՝ «զոհում է» իրեն հանուն ընտանիքի: Գուցե դա է պատճառը, որ մեր հասարակության մեջ պաշտոնյա կանանց թիվը զիջում է տղամարդկանց: Մեծ է կնոջ դերը ընտանիքի կայացման գործում: Նա պետք է հնարավորինս շատ ժամանակ կարողանա տրամադրել ընտանիքին: Այս առումով, հայ կանայք ուղղակի հրաշագործներ են»,- ասում է տիկին Թամրազյանը:

Նա աշխատանքի լավ կազմակերպիչ է, երկար տարիներ աշխատել է որպես մանկավարժ: Աստղիկը մարդու մեջ գնահատում է դիմացինին կարեկից լինելն ու սատար կանգնելը:

Նելլի Սահակյան

«ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՆ ՀԵՐՈՍ - 2015»

Արդեն ավանդական դարձած ամենամյա «Գյուղմթերքի արտադրության կին հերոս» ծրագիրը մեկնարկել է դեռևս 2011 թվականից և նպատակ ունի խրախուսել հանրապետությունում ֆերմերային ակտիվ գործունեությամբ զբաղվող, գյուղմթերքի արտադրության ոլորտում դրական տեղաշարժեր գրանցած և հաջողությունների հասած կանանց:

Կանանց տոներին ընդառաջ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՕՔՍՖԱՄ-ի, Գյուղատնտեսական Դաշինքի նախաձեռնությամբ և Ավստրիական Զարգացման Գործակալության և Եվրամիության ֆինանսական աջակցությամբ, անցկացվեց «Գյուղմթերքի կին հերոս –2015» հերթական միջոցառումը: Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս անգամ շեշտը դրված էր պարենային անվտանգության բարելավման հարցում գյուղմթերք արտադրող կանանց դերի բարձրացմանը: Թերևս, այդ պատճառով էլ ցուցահանդեսին ներկայացված էին «սեփական ձեռքերով պատրաստված», «տեղական», «էկոլոգիապես մաքուր» արտադրանք:

Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերից գյուղատնտեսության ոլորտում ներգրավված և ակտիվ գործունեություն ծավալող թվով 11 կին ֆերմերներ, որոնցից երեքի թեկնածությունն առաջադրել էր «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ը: Թեկնածուները ներկայացնում էին ՀՀ հեռավոր Տավուշի և Սյունիքի մարզերը, ուր անասնապահության զարգացման ծրագրեր է իրականացնում ՌԶԳ ՀԿ-ը՝ նպատակ ունենալով շահառու համայնքների ֆերմերների համար ապահովել տնտեսական հնարավորությունների և եկամտի աճ:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը, ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչ Ջոն Բարքերը և այլ բարձրաստիճան հյուրեր, ովքեր հնարավորություն ունեցան մոտենալ բոլոր մասնակիցների տաղավարներին, զրուցել նրանց հետ, ինչպես նաև ծանոթանալ յուրաքանչյուր մարզին և համայնքին բնորոշ գյուղատնտեսական ապրանքներին:

Միջոցառումն ուղեկցվեց գյուղատնտեսության ոլորտում հաջողությունների հասած կանանց կողմից արտադրված գյուղմթերքների ցուցահանդես-համտեսով: Միջոցառումն ինքնին հսկայական փորձ էր բոլոր մասնակիցների համար, ովքեր հնարավորություն ունեցան շփվելու միմյանց և այցելուների հետ, բարելավեցին իրենց կարողությունները՝ հանրային խոսքի կառուցման և սեփական արտադրանքի միջոցով, իրենց համայնքն ու ավանդույթները ներկայացնելու ասպարեզում:

Իր խոսքում Ռ. Մակարյանը կարևորեց կանանց դերը գյուղատնտեսության ոլորտում՝ նշելով, որ այս ոլորտում զբաղվածների մեծ մասը հենց կանայք են: Փոխնախարարը նաև շեշտեց, որ հետագայում էլ հնարավոր բոլոր լծակները կօգտագործեն՝ աջակցելու գյուղատնտեսությունում ընդգրկված կանանց: Միջոցառման ավարտին՝ Ռոբերտ Մակարյանը մասնակից կին-հերոս ֆերմերներին պատվոգրեր ու մրցանակներ հանձնեց:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ՏԵՍԱԿԵՏ

ՄԻԱԿ ԵԼՔԸ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի բնակչության ապրուստի միակ միջոցն ապահովում է անասնաբուծությունը: Վերջինիս զարգացման համար նպաստավոր են թե՛ բնակլիմայական պայմանները, և թե՛ ճյուղի զարգացման ուղղությամբ բնակիչների մասնագիտացված լինելը: Արոտավայրերն ունեն հարուստ բուսածածկ, սակայն բնակչությունը դժվարությամբ է խոտը տեղափոխում գյուղ, քանի որ չկան համապատասխան բեռնատար ավտոմեքենաներ, ինչը դժվարացնում է գյուղատնտեսական կենդանիների ձմռան պաշարի ստեղծումը:

Ֆերմեր Վաղո Գրիգորյանի տեղեկացմամբ, շատ դեպքերում կուտակված խոտը գյուղացին ուղղակի չի հասցնում մինչև սեզոնի վերջը տեղափոխել գյուղ: Ֆերմերը խնամում է 30 գլուխ խոշոր, գրեթե նույնքան՝ մանր եղջերավոր կենդանիներ: Զբաղվում է նաև ձիաբուծությամբ և մեղվաբուծությամբ: «Գյուղատնտեսության բնագավառում պետք է գործի պարտադիր ապահովագրական համակարգը, քանի որ ճյուղը ռիսկային է: Անձամբ ինքս պատրաստ եմ վճարել գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության համար անհրաժեշտ բոլոր վճարները: Ֆերմերն այսօր պետք է վստահ լինի, որ, որևէ անկանխատեսելի իրավիճակի դեպքում, ինքը պետք է փոխհատուցվի»,- ասում է Վ. Գրիգորյանը:

Աղավնավանքի բնակիչները (հիմնականում գյուղը վերաբնակեցված է) սիրով են զբաղվում անասնաբուծությամբ: Բացի այդ, գյուղում առանձնապես զարգացած չէ դաշտավարությունը, իսկ այլ աշխատատեղեր գրեթե չկան: Ըստ ֆերմերի՝ կարելի է զարգացնել խոզաբուծությունը: Սակայն, դարձյալ ի հայտ է գալիս ապահովագրական համակարգի ներդրման անհրաժեշտությունը, ինչի բացակայությունը ժամանակ առ ժամանակ գյուղացին շոշափելիորեն զգում է:

Նելլի Սահակյան

Ագրոլրատու
Մարտ 6 - 17, 2015 թ.
թիվ 5 (2060)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԱԶԱԹԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՒԶԻ ՃԻՇՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Կոպտաբուրդ և կիսակոպտաբուրդ ոչխարների մոտ պահպանվել են իրենց նախնիներին բնորոշ բրդածածկի որոշ յուրահատկություններ: Դրանց մաշկը ակտիվորեն մասնակցում է օրգանիզմում տեղի ունեցող նյութափոխանակության գործընթացներին: Նրա միջոցով են իրագործվում այդ ոչխարների պաշտպանական և հարմարվողական ռեակցիաները:

Գիտական բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, որ դրանց բրդի քանակն ու որակը սերտորեն կապված է մաշկի կառուցվածքային և ֆունկցիոնալ հատկանիշների հետ: Այդ կենդանիների մոտ գարնանը հաճախ տեղի է ունենում մազաթափություն, որն առավել ցայտուն է նրանց մոտ, որոնց բրդաթելերը միմյանցից զգալիորեն տարբերվում են իրենց բարակությամբ:

Արտադրության մեջ ընդունված է այն կարծիքը, որ

գարնանային մազաթափությունն առաջանում է օդի ջերմաստիճանի բարձրացումից, այսինքն՝ այն կապված է օրգանիզմի ջերմակարգավորման գործընթացների ակտիվացման հետ: Սակայն, երկարամյա տարիների փորձը հանգեցրել է այն եզրակացության, որ գարնանային մազաթափությունն առաջանում է այդ ոչխարների ոչ լիարժեք կերակրումից, որի դեպքում, շատ հաճախ, մսուրային շրջանում թերկերակրման հետևանքով դրանք կորցնում են իրենց կենդանի զանգվածի զգալի մասը: Հայաստանի շատ տարածաշրջաններում այն հասնում է շուրջ 25-30 %-ի:

Ապացուցված է, որ տարբեր բարակություն ունեցող բրդաթելերի աճի ինտենսիվությունը կապված է մաշկում դրանց մազարմատների և դրանց ֆոլիկուլների տեղադրման խորության հետ: Որքան խորն է տեղադրված մազարմատը, բոլոր մյուս հավասար պայմաններում, այնքան ավելի շատ սննդանյութեր են հասնում վերջինիս, այնքան հաստ և համապատասխանաբար երկար մազաթել է աճում:

Ապացուցված է նաև, որ մաշկում ավելի խորն են տեղադրված քստամազերը, այնուհետև՝ անցողիկ մազերը և ավելի մակերեսային դիրք ունեն աղվամազերը: Դրա հետևանքով աղվամազերը մսուրային շրջանում թերկերակրման հետևանքով դադարում են աճելուց և քստամազի աճի ընթացքում, բարձրանում են մազածածկի վերի մասը և նպաստում թաղիքացման առաջացմանը:

Գարնանային մազաթափությունն ուսումնասիրվել է կոպտաբուրդ բալբաս և հայկական կիսակոպտաբուրդ ցեղերի և դրանց խառնացեղ ոչխարների մոտ: Բալբաս ցեղի ոչխարների բրդում կան բավականին քանակության աղվամազեր, անցողիկ մազեր, քստամազեր և աննշան քանակի կարճ քստամազեր, չոր և «մեռած» մազեր, իսկ հայկական կիսակոպտաբուրդ ցեղի մարտունու ներցեղային տիպի ոչխարների բուրդը պարունակում է աղվամազեր, անցողիկ մազեր և քստամազեր: Ուսումնասիրված տնտեսություններում (Գեղարքունիքի մարզ) մսուրային շրջանը տևել է 5-6 ամիս (նոյեմբերից մինչև ապրիլի վերջը): Մսուրային շրջանում այդ ոչխարների մոտ սննդանյութերի պակասի հետևանքով, դանդաղել է աղվամազերի գերակշռող մասի աճը և դրանք քստամազերի աճի հետևանքով բարձրացել են բրդածածկի վերին հատվածն ու առաջացրել թաղիքացում: Դիտարկումները ցույց են տվել, որ որքան կոպիտ է եղել կենդանու բրդածածկը, այնքան շուտ է սկսվել դրանց մազաթափությունը և բրդածածկի թաղիքացումը, և որքան պակասել է մազածածկի կապը կենդանու մաշկի հետ, այնքան շարժումների ժամանակ հեշտությամբ տեղի է ունեցել բրդաթափություն: Կոպտաբուրդ և կիսակոպտաբուրդ ոչխարների մոտ բրդաթափության հետևանքով հին բրդի կորուստը հասնում է 100-ից 200 գրամի:

Գարնանային մազաթափության ժամանակ տեղի է ունենում «մեռած» մազերի և աղվամազերի լրիվ փոխանակում նորերով:

Նախկինում կոպիտ և կիսակոպիտ բրդածածկ ունեցող լիատարիք ոչխարներին խուզում էին տարին երկու անգամ (գարնանը և աշնանը): Վերջին տարիներին այդ ոչխարներին խուզում են տարին մեկ անգամ՝ գարնանը: Եթե ամռանը բոլոր բրդաթելերն աճում են ավելի ինտենսիվ՝ արոտի կանաչի առատ սննդանյութերի հաշվին, նաև պայմանավորված մաշկին արյան լավ հոսք ապահովող օդի բարձր ջերմաստիճանով, ապա ձմռանը նկատվում է բոլոր բրդաթելերի, հատկապես՝ աղվամազերի աճի դանդաղում և, նույնիսկ՝ դադարում: Դրա հետևանքով գարնանը տեղի է ունենում այդ ոչխարների մազաթափություն և թաղիքացում:

Որպեսզի գարնանային մազաթափությունը տնտեսական վնասներ չպատճառի, կոպտաբուրդ և կիսակոպտաբուրդ ոչխարների գարնանային խուզը պետք է կատարել մազաթափությունից առաջ: Հայաստանի ցածրադիր վայրերում (նախալեռնային գոտում) այն պետք է կատարել մարտ-ապրիլ ամիսներին, իսկ բարձրադիր լեռնային գոտում՝ ապրիլ-մայիս ամիսներին: Նույն տարում ծնված գառների մազաթափություն տեղի չի ունենում:

Ուստի, նշված տարածաշրջաններում այդ գառներին պետք է խուզել հուլիս-օգոստոս ամիսներին, ընտրողաբար, նկատի ունենալով դրանց մարմնի և բրդածածկի զարգացվածության աստիճանը: Գառան բրդից (գյուզամ) պատրաստում են բարձր որակի տեխնիկական մահուդ և թաղիքներ:

Գ. Ավետիսյան
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Մ. Ստեփանյան
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
Սնունդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

ՍԵՄԻՆԱՐ

ՊԱՇՏՊԱՆԵԼ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻՑ

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն, Միացյալ Թագավորության «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց»-ի և Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարության հետ համատեղ, աշխատում է գյուղաբնակներին թունաքիմիկատներով թունավորումներից պաշտպանելու ուղղությամբ:

Վերջերս «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ն կազմակերպել էր սեմինար՝ «Պաշտպանել ֆերմերներին և խոցելի խմբերին թունաքիմիկատներով թունավորումներից» խորագրով, որի ընթացքում ներկայացվեցին՝ «Ժամկետանց թունաքիմիկատների վերացման և դրանց առաջացման կանխարգելման նպատակով կարողությունների բարելավումը՝ որպես նախկին Խորհրդային Միության տարածքում չօգտագործված վտանգավոր քիմիկատների հիմնախնդրի լուծման օրինակ» ծրագրի արդյունքները: Այս բաղադրիչով նախատեսվում է բացահայտել գյուղական համայնքներում թունաքիմիկատների օգտագործման ժամանակ կիրառվող վտանգավոր գործելակերպը և բարձրացնել բնակիչների իրազեկվածությունն՝ առավել վտանգավոր թունաքիմիկատների օգտագործման հետ կապված ռիսկերի վերաբերյալ: Արդյունքում, այդ ամենը կնպաստի չափազանց վտանգավոր թունաքիմիկատների ազդեցության հետ կապված ռիսկերին համայնքի արձագանքման կարողությունների հզորացմանը և կարգավորող մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի բարելավմանը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից: Գործընկերների թվում են՝ Միացյալ Թագավորության «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց» միջազգային ՀԿ-ն, Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարությունը և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանդիսանում է ծրագրի ազգային համակարգողը:

Սեմինարին մասնակցում էին՝ ՀՀ գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների ներկայացուցիչներ, պետական հաստատությունների, միջազգային, տեղական հասարակական, գիտական կազմակերպությունների և թիրախային համայնքների ներկայացուցիչներ: Մասնակիցները, սեմինարի ընթացքում, գնահատել են իրականացված ծրագրի արդյունքները և ներկայացրել առաջարկություններ՝ չափազանց վտանգավոր թունաքիմիկատների օգտագործման անհրաժեշտության և վերջիններս առավել անվտանգներով փոխարինման վերաբերյալ:

Ներկաներին ողջունեց «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի նախագահ Ելենա Մանվելյանը: Այնուհետև թեման կարևորեցին ՀՀ գյուղատնտեսության նախարարության Այգեգործության զարգացման և բույսերի պաշտպանության բաժնի պետ Կարինե Եսայանը և բնապահպանության նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ Անահիտ Ալեքսանդրյանը: Ըստ տիկին Եսայանի՝ ծրագրի իրականացման համաձայնագիրը հաստատվել է դեռևս 2012թ., ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից: Կարևոր և անհրաժեշտ է կատարել օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և հասարակության իրազեկում: Ծրագրի նպատակների և մեթոդաբանության վերաբերյալ մեկնաբանեց Քնարիկ Գրիգորյանը /ՀԿ/: Իսկ ԵՄ/ՊԳԿ ծրագրի մենեջեր (Կովկասի տարածաշրջանում) Խաթունա Ախալայան, ողջունելով ներկաներին, ներկայացրեց ծրագիրն ու առաջարկեց քննարկել թունաքիմիկատների ազդեցության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացը:

Ծրագրի նպատակների և հիմնական արդյունքների մասին համառոտ տեղեկատվություն ներկայացրեց ՀԿ-ի անդամ Գոհար Խոջոյանը: Թունաքիմիկատների ազդեցության հետևանքով մարդու մոտ կարող են առաջանալ լուրջ առողջական խնդիրներ: Կանայք, հատկապես հղի և կրծքով կերակրող մայրերը, ինչպես նաև՝ երեխաներն առավել խոցելի են թունաքիմիկատների ազդեցության նկատմամբ: Թունաքիմիկատներ օգտագործողները հաճախ սխալ պատկերացում ունեն առողջության վրա թունաքիմիկատների ազդեցության հետևանքների մասին: Ոլորտը կարգավորող մարմինները և որոշում կայացնողները կարիք ունեն հիմնախնդրի մասշտաբի և պատճառների մասին լրացուցիչ տեղեկատվության, ինչը կօգներ նրանց կայացնել առավել ողջամիտ որոշումներ: Ծրագիրն օգնում է ավելի լավ հասկանալ Հայաստանում առկա խնդիրները և բացահայտումներով կիսվել կարգավորող մարմինների, համայնքների և այլ կարևոր շահագրգիռ կողմերի հետ: «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց» թեմայով հանդես եկավ Ռինա Գուադագնինին (Միացյալ Թագավորության ներկայացուցիչ):

ՀԿ-ից Լիլիկ Սիմոնյանը մանրամասնեց ՀՀ 4 մարզերի (Արմավիրի, Արարատի, Տավուշի և Գեղարքունիքի) 20 համայնքներում իրականացված հարցումների արդյունքները և ֆերմերներից վերցրած հարցազրույցների տեսագրությունները: Սեմինարի ընթացքում մասնակիցները ծանոթացան նաև թունաքիմիկատների ազդեցության հետ կապված ռիսկերի նվազեցման ուղիներին: Իսկ արդյունքների վերաբերյալ խմբային քննարկումներն ու առաջարկությունները ներկայացրեց Էմմա Անախասյանը:

Հարցումների արդյունքները ցույց են տվել, որ իրազեկության բարձրացման քարոզարշավի իրականացման կարիք կա ամբողջ հանրապետությունում:

Լիանա Շախնազարյան

ՇԻՐԱԿ

ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Շիրակի մարզում հիմնական մշակաբույսերի ցանքատարածքները 2014թ., նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են շուրջ 2782 հեկտարով: Մարզում ընդհանուր ցանքատարածքները կազմում են 63646 հա՛ նախորդ տարվա 60864 հեկտարի դիմաց:

Այսպես, հացահատիկի ցանքատարածքներն ավելացել են 1535, կերային մշակաբույսերինը՝ 1133 հեկտարով: Ավելի քան 48 հեկտարով ավելացել են կարտոֆիլի, 62 հեկտարով՝ բանջարեղենի ցանքատարածքները: Կատարվել է նաև 26545 հա աշնանացան, որի վիճակը, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանի տեղեկացմամբ, բարվոք է և 2015թ. կարելի է ակնկալել բարձր բերք: «Բուսաբուծության բնագավառում ստացված արտադրանքի իրացման արդյունքում, 2014թ. ստացված եկամուտը կազմել է 55,3 մլրդ. դրամ, նախորդ տարվա 55,15 մլրդ. դրամի դիմաց: Ինչ վերաբերում է «ՀՀ-ում 2010-2014 թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրին», ապա վերջինիս շրջանակում 2014թ.-ին 35 շահառուի հատկացվել է 120,05 տոննա էլիտային վերարտադրության սերմացու»,- ասում է վարչության պետը: Նույն ծրագրով, ավելի քան 68 համայնքի, հատկացվել է 1900 տոննա առաջին վերարտադրության սերմացու: Մովսես Մանուկյանի տեղեկացմամբ, «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում, մարզին հատկացվել է 4888,05 տ ազոտական պարարտանյութ: Վերջինիս ընդհանուր արժեքը կազմել է 586,566 մլն. դրամ, որից՝ 195,522 մլն. դրամը սուբսիդավորվել է պետության կողմից: Ծրագրի շրջանակում, մարզին հատկացվել է նաև 3438364 լիտր դիզելային վառելանյութ, ինչպես նաև 92,85 տ կալիումական և 92,1 տ ֆոսֆորական պարարտանյութեր:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Գեղարքունիքի մարզում, անցած գյուղատնտեսական տարում, արձանագրվել է անասնագլխաքանակի աճ:

Այսպես՝ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 115619 գլխի, որը նախորդ տարվանից ավելի է 3354 գլխով: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վանիկ Հովհաննիսյանի տեղեկացմամբ, 1225 գլխով ավելացել է նաև ոչխարների և այծերի գլխաքանակը: Վարչության տվյալներով, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը հասել է 121000, մանրինը՝ 111000 գլխի: 2014թ.-ին ավելացել են նաև անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները:

ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ, անասնագլխաքանակի համաճարակային և ոչ համաճարակային հիվանդությունների կանխարգելման նպատակով, մարզում ծախսվել է 117 մլն դրամ: Պատվաստվել են 105 հազ. գլուխ խոշոր, 85 հազ. գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Պատվաստվել են նաև թռչուններն ու խոզերը:

ԼՈՌԻ

ԵՐԿՈՒ ԽՈՇՈՐ ԾՐԱԳԻՐ

2014 թվականը Լոռու մարզում նշանավորվեց «Սպիտակի թռչնաբուծական տնտեսություն» ՍՊԸ գործարկումով, որը մասնագիտացած է բրոյլերի բուծման ուղղությամբ:

Թռչնաֆաբրիկայի գործարկման նպատակով, կատարվել է ավելի քան 10 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում: Տնտեսության արտադրական հզորությունը կազմում է 1 570 000 գլուխ՝ 2350 տոննա՝ բրոյլերի մսի արտադրությամբ: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանի կարծիքով՝ թռչնաֆաբրիկան, իր արտադրած բարձրորակ թռչնամսով կապահովի բնակչության զգալի մասի պահանջարկը: Բացի այդ, նոր աշխատատեղեր կբացվեն, ինչի կարիքը այնքան շատ ունի Սպիտակի ազգաբնակչությունը:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող՝ «Հայաստանում սպանդանոցների զարգացման» ծրագրի շրջանակներում, մարզի Օձուն համայնքում կառուցվել է սպանդանոց, ինչը հնարավորություն կտա գյուղատնտեսական կենդանիների մորթն իրականացնել սանիտարահիգիենիկ պայմաններում: Բացի այդ, այդպիսով վերջ կդրվի բակային մորթին, ինչն էլ որակյալ միս ստանալու կարևորագույն պայմանն է:

Մարզային լուրերը՝ Նելլի Սահակյանի

ՕՐԳԱՆԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԹԵՐՔԸ՝ «ՊՐՈԴԷՔՍՊՈ- 2015-ՈՒՄ»

«Շեն» ԲՀԿ-ի աջակցությամբ Հայաստանում արտադրված սերտիֆիկացված օրգանական մթերքը փետրվարին ներկայացվեց Մոսկվայում կայացած միջազգային Պրոդէքսպո-2015 գյուղատնտեսական արտադրության ցուցահանդեսին: Այս ցուցահանդեսում, առաջին անգամ ներկայացվեց նաև օրգանական մթերքի բաժինը: Հայաստանից ներկայացվել էր շուրջ 9 արտադրողների՝ 18 արտադրատեսակ, դրանք էին՝ բուսական թեյեր, չիր, հյութեր, թարմ միրգ, մեղր և այլն:

Թեև Ռուսաստանի Դաշնությունում օրգանական մթերքի շուկան նոր է զարգանում, սակայն սպառողների հետաքրքրությունը շատ մեծ էր: Ցուցահանդեսի մասնակիցները հատուկ ուշադրություն էին դարձնում հայկական օրգանական արտադրանքին, քանի որ «Շենի» կողմից ներկայացվող կազմակերպությունները բոլորը սերտիֆիկացվել էին «Էկոգլոբ» հավաստագիր տրամադրող կազմակերպության կողմից: Ռուսաստանյան սպառողը գտնվում է նույն խառնաշփոթության մեջ, ինչ՝ հայկականը: Շուկայում առկա են մի շարք ԷԿՈ և ԲԻՕ մակնշմամբ ապրանքներ, որոնք չեն համապատասխանում օրգանական մթերքների հատկանիշներին: Սակայն, ռուսաստանյան սպառողը ծանոթ է եվրոպական սերտիֆիկացնող կազմակերպությունների մակնշմանը և, դրանով իսկ, կողմնորոշվում է՝ իրական և ոչ իրական ԲԻՕ արտադրանքի մեջ: Սա էր պատճառը, որ շատ գնորդներ անմիջապես մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հայկական արտադրանքի նկատմամբ, քանի որ բոլոր արտադրողներն ունեին եվրոպական սերտիֆիկացիա: Հայաստանում նույնպես հարկավոր է աջակցել արտադրողին՝ տարբերակելու իրական օրգանական-ԲԻՕ արտադրանքը:

Ինչպես նշում է «Շեն» ԲՀԿ-ի ծրագրերի համակարգող Նվարդ Շահմուրադյանը, իրենց հաջողվել է շուրջ 80 և ավելի կապեր ստեղծել մեծածախ գնորդների և ցանցային խանութների հետ: «Շենը» նախատեսում է հնարավոր նոր համագործակցության կապեր խթանել ռուսական շուկայի մեծածախ գնորդների և հայկական օրգանական մթերք արտադրողների միջև: Բոլոր կոնտակտային տվյալները տրամադրվել են ու կարող են տրամադրվել օրգանական արտադրությամբ զբաղվող ֆերմերներին և վերամշակող ձեռնարկություններին:

«Շենը», հանդիսանալով ՀՀ-ում Օրգանական գյուղատնտեսության հիմնադիր կազմակերպությունը, շարունակում է 2002թ.-ից իր որդեգրած քաղաքականությունը՝ խթանելով օրգանական գյուղատնտեսության զարգացումը ՀՀ-ում: «Շենը» պատրաստ է իր ծրագրերի շրջանակում աջակցել և անվճար խորհրդատվություն տրամադրել այն բոլոր արտադրողներին, որոնք ցանկանում են զբաղվել իրական օրգանական մթերքի արտադրությամբ:

Լիանա Շախնազարյան

ԵՂԱՆԱԿ

ԾԻՐԱՆԵՆԻՆ ԱՐԴԵՆ ԾԱՂԿԵԼ Է

Արարատյան դաշտավայրում ծիրանենիները ժամանակին են ծաղկել, ցրտահարման վտանգի մասին խոսելը դեռ վաղ է, քանի որ, ըստ Հայպետհիդրոմետի տվյալների, եղանակը շարունակում է կայուն մնալ, այսինքն՝ եղանակային պայմաններն առայժմ բարեհաջող են գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար: Արարատյան դաշտավայրում ծաղկել են նաև այլ վաղահաս կորիզավորները՝ կեռասենին, սալորենին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում թիվ ԱՎԴ/0406/02/15 քաղաքացիական գործն, ըստ դիմումի, Նաիրա Իվանի Ավանեսյանի՝ Արտակ Ռուբենի Բադալյանին /ծնված 29.10.1970թ., հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Ոսկեվազ, Արագածի փողոց 3-րդ նրբանցք, տուն 2/ անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Արտակ Ռուբենի Բադալյանի /վերջին հայտնի բնակության վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Ոսկեվազ, Արագածի փողոց 3-րդ նրբանցք, տուն 2/ վերաբերյալ տեղեկություն ունեցող անձանց խնդրում ենք այդ մասին հայտնել ՀՀ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան 19/ կամ զանգահարել /0235 2 23 87/ հեռախոսահամարով:

Ագրոլրատու
Մարտ 6 - 17, 2015 թ.
թիվ 5 (2060)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՃՈՂՆԵՐԻ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՈՐ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Որոճողների ճիճվային հիվանդությունները բազմաթիվ են և մեծ տարածում ունեն Հայաստանի Հանրապետությունում: Առավել հաճախ հանդիպում են ֆասցելյոզ, դիկրոցելյոզ, մոնիեզիոզ, թելազիոզ, դիկտիոկաուլյոզ, հեմոնխոզ, խաբերթիոզ, նեմատոդիրոզ և այլ հիվանդությունները, որոնց բուժման և կանխարգելման համար, ներկայումս հանրապետության անասնաբուժական դեղատնային ցանցի կողմից առաջարկվում են տարբեր երկրներից ներկրված բազմաթիվ ճիճվամուղ դեղամիջոցներ:



Հայտնի է, որ ճիճվամուղ դեղամիջոցներն օժտված են բարձր հակաճիճվային արդյունավետությամբ, դրանք կենդանիների համար անվտանգ են, անասնատերերի համար՝ մատչելի և տնտեսապես արդյունավետ, և որ ամենակարևորն է՝ շրջապատող միջավայրի համար՝ ապահով: Ֆերմերներն ու անասնաբույժները ճիճվամուղ դեղամիջոցները ձեռք բերելիս, առաջին հերթին պետք է ստուգեն դեղամիջոցի փաթեթի վրայի պիտակի առկայությունը, որտեղ նշված պետք է լինեն արտադրող երկիրը, տվյալ դեղանյութում ազդող նյութի պարունակությունը, այն կենդանատեսակները, որոնց համար դրանք նախատեսված են, ինչպես նաև՝ դեղաչափերը, օգտագործման ձևն ու պահպանման ժամկետները:

Ծանոթ լինելով հանրապետության անասնաբուժական դեղատնային ցանցում առկա ճիճվամուղ դեղամիջոցների ցանկին, նաև ելնելով մեր կողմից կատարված փոձարկումների արդյունքներից, կփորձենք ֆերմերներին առաջարկել այն հիմնական պատրաստուկները, որոնք մեր հանրապետության պայմաններում ցուցաբերել են համեմատաբար բարձր ճիճվամուղ ազդեցություն և, անվտանգության տեսակետից, օժտված են վերը նշված հատկանիշներով:

Ներկայումս անասնաբուժական դեղատնային ցանցի կողմից լայն առաջարկ ունեցող ճիճվամուղների թվին են պատկանում՝ Ռոլենոլ, Ալբենոլ 100-օրալ, Հելմիցիդ, Բենվետ, Բրովադազոլ, Բենդազ 600, Դիեվերմ 600 և այլն: Այս բոլոր պատրաստուկներն էլ օժտված են հիանալի ճիճվամուղ ազդեցությամբ և ազդում են տափակ, շղթայաձև ու կլոր որդերի վրա: Հետևաբար, ֆերմերի համար տնտեսապես արդյունավետ է միաժամանակ պայքար տանել մի քանի տեսակի որդերի նկատմամբ և, որ ամենակարևորն է՝ այս դեղամիջոցները կենդանու օրգանիզմ ներմուծելը մասնագիտական պատրաստվածություն չի պահանջում:

Թոքային և աղիքային նեմատոդների (կլոր որդեր) նկատմամբ անասնաբուժական դեղատնային ցանցի կողմից առաջարկվում են՝ Լևա-200, նիլվերմ, պամիզոլ, տետրամիզոլ և պիպերազին ճիճվամուղ դեղամիջոցները, որոնք օժտված են բարձր ճիճվամուղ ազդեցությամբ և կենդանիների համար անվտանգ են:

Ինչպես խառը, այնպես էլ միայն որոշակի որդերի նկատմամբ նախատեսված ճիճվամուղներն օգտագործելիս, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ներդիր թերթիկում ամրագրված դեղամիջոցի վերջին ներմուծումից հետո մսի և կաթի օգտագործման ժամկետների վրա:

Ժամանակին և ճիշտ կատարված ճիճվաթափությունը թույլ կտա կանխարգելելու մեր հանրապետությունում որոճողների շրջանում մեծ տարածում ունեցող ճիճվային հիվանդությունները:

Հ. Զ. Նաղաշյան
ՀԱԱՀ-ի պրոֆեսոր,
անասնաբուժական
գիտությունների դոկտոր

ՇԻՐԱԿ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Վերջերս Հայաստանում մեկնարկեց Եվրոպական Միության և Ավստրիայի զարգացման գործակալության համատեղ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման» ծրագիրը (ENPARD):

Ծրագրի շրջանակում, որի իրականացման տևողությունը 3 տարի է, ՀՀ կառավարությանը կտրամադրվի 20 մլն եվրո՝ բյուջետային աջակցություն գյուղատնտեսության և գյուղական համայնքների կայուն և համապարփակ զարգացման համար: Միևնույն ժամանակ, 5 մլն եվրո օժանդակություն կցուցաբերվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ տեխնիկական աջակցության, նախարարության հզորությունների և Հայաստանում ֆերմերների խմբերի և գյուղմթերքի արժեքային շղթաների բարելավման համար: Բացի այդ, Ավստրիայի կառավարությունը, «Ավստրիայի զարգացման համագործակցության» միջոցով, իր կողմից լրացուցիչ 1 մլն եվրո կտրամադրի Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերին՝ նույն նպատակների իրականացման նպատակով:

Ծրագրի իրականացնող «ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության» UNIDO-ի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի՝ UNDP-ի ներկայացուցիչներն այցելեցին Շիրակի ԳԱՄԿ: Պատվիրակության կազմում էին՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջազգային կոորդինատոր Սեվերին Օմանը, ծրագրի համակարգող Սերգեյ Մաթևոսյանը, փորձագետ Պարույր Ասատրյանը, օգնական՝ Գայանե Մանվելյանը, մոնիտորինգի մասնագետ Մարգարիտա Գասպարյանը: Հանդիպմանը մասնակցում էին՝ Շիրակի ԳԱՄԿ-ի տնօրեն Ջ. Ասլանյանը, մասնագետներ՝ Ն. Մկրտչյանը և Գ. Մկրտչյանը: Կազմակերպության միջազգային կոորդինատոր՝ Սեվերին Օմանի կողմից ներկայացվեց ծրագիրը և հետագա անելիքները Շիրակի մարզում, մասնավորապես՝ գործող ֆերմերային խմբերի և նրանց կողմից մարզում արտադրվող գյուղմթերքների արժեշղթաների բարելավումը:

Ջ. Ասլանյանը ներկայացրեց մարզում արդեն գործունեություն ծավալող ֆերմերային խմբերին, նրանց գործունեության ոլորտներն ու դրանց բարելավման ուղիները, մարզում նոր, առավել բարձրարժեք մշակաբույսերի (հատիկաընդեղեն, հնդկացորեն) արտադրության և նախնական վերամշակման կազմակերպումը: Հանդիպումից հետո կողմերը պայմանավորվեցին, ծրագրի իրականացման ժամանակահատվածում, շարունակել համագործակցությունը:

Շիրակի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԿԱԹ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔ

Չնայած նրան, որ ՌԴ սանկցիաների հետ կապված, 2014-ին կաթի գինը երկրում ամբողջ տարվա ընթացքում անկման միտում ուներ. սեպտեմբերին նվազեց ռեկորդային՝ 30 %-ով, այնուամենայնիվ, կաթի արտադրությունը նախատեսված 6,4 %-ի չափով ավելացավ, իսկ 2015-ին կավելանա նախատեսված 10 %-ի չափով: Կաթի արտադրությունն ապահովում է 44 հազար աշխատատեղ և դրանք չկորցնելու համար, անգամ 2008-2009 թվականների ճգնաժամին, ներդրումներն այդ կարևոր բնագավառում չէին նվազում: Երկրում կերարտադրության տակ է դրված գյուղատնտեսական հողերի 60 %-ը, որն ապահովում է երկրի ողջ անասնագլխաքանակը բավարար քանակությամբ բարձրակարգ կերով:

Կաթի արտադրությունն ու վերամշակումը երկրում իրականացնում է համաշխարհային ճանաչում ունեցող ընկերություններից ու կազմակերպություններից բաղկացած կլաստերը. 21 ընկերություն 51 գործարաններում վերամշակում են երկրում արտադրվող կաթի 98 %-ը: Դրա առյուծի բաժինն ընկնում է պանրին՝ 56 %, 13 %-ը՝ կաթի փոշուն, 9 և 7 %-ը՝ համապատասխանաբար խտացված և պաստերիզացված կաթ և 2 %-ը՝ կարագ ստանալու համար: Մնացած կաթը, փոքր չափաբաժիններով, վերամշակվում և օգտագործվում է այլ նպատակներով:

Երկրում բուծվող խոշորի հիմնական ցեղը հոլշտին ֆրիզն է, որի բարելավմանն ուղղված մշտական աշխատանքներ են տարվում: Դրանով զբաղվում է CRV ընկերությունը, որը ցեղական ցլերի սերմնահեղուկ է արտահանում ամբողջ աշխարհին՝ վերջին 150 տարվա գենոֆոնդի բարելավման տեղեկատվության հետ մեկտեղ: Սերմնահեղուկ գնելիս, ֆերմերը կարող է «մոդելավորել» իր ապագա հորթին՝ կառուցվածքային համամասնության, հիվանդությունների նկատմամբ դիմացկունության և, նույնիսկ, կրծի գույնի-երանգի առումով. մուգ կրծով կովերն ավելի հեշտ են կթվում: Սերմնահեղուկի մի չափաբաժինն արժի 5-40 եվրո, երինջը՝ 1800-2500 եվրո:

Իր խնամած կովը մշտապես գյուղացու ուշադրության կենտրոնում է. «Մենք կարող է ճշգրիտ չիմանանք մեր երկրի բնակչության թիվը, բայց կովերինը՝ պարտադիր», - կատակում են հոլանդական ֆերմերները: Ահա Նիդերլանդների կաթի սեկտորը բնութագրող որոշ թվեր.

Կաթի տարեկան արտադրությունը, մլն/տ՝ 12.2
Գլխաքանակը, մլն՝ 4.0
Այդ թվում կթու կովերինը՝ 1.5
Մեկ կթու կովի միջին կաթնատվությունը, կգ՝ 8100
Նախրի միջին չափը, գլուխ՝ 80
Կաթնային տնտեսությունների թիվը՝ 19000
Վերամշակվող կաթի ծավալը, մլն տ՝ 11.8
1 լիտր կաթի մթերման միջին գինը, եվրոսենթ՝ 41
1 լիտր կաթի վաճառքի միջին գինը, եվրոսենթ՝ 65
Կաթնամթերքի արտահանման տարեկան ընդհանուր ծավալը, մլրդ եվրո՝ 6.0
Այդ թվում՝ պանրինը՝ 2.9:

Գենետիկայի, պահվածքի և կերակրման տեխնոլոգիայի, անասնաբուժական սպասարկման, մասնագետների պատրաստման և վերապատրաստման, արտադրանքի որակի կառավարման առումներով հոլանդացիներն առաջավորների շարքում են:

Վ Հ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

Գարնանային անգերազանցելի հինգ սննդատեսակ

«Ճիշտ և խնամքով ընտրված սնունդը կարող է վերաձևակերպել մեր առողջության ճակատագիրը»,- ասում է Յեյլի համալսարանի Կանխարգելիչ հետազոտությունների կենտրոնի տնօրեն Դեյվիդ Կատսը: Գարնանը մեր օրգանիզմը ձմեռային «քնից» դուրս գալու կարիք ունի: Ներկայացնում ենք գարնանային անգերազանցելի սննդատեսակների շարքի առաջին մասը:

Սպանախ
Էներգիայի համար

Համեղ, կանաչ բույսը երկաթի մեծ աղբյուր է, հատկապես՝ եթե միս շատ չեք օգտագործում: Երկաթն արյան կարմիր գնդիկների կարևոր բաղադրիչն է, վերջիններս էլ, իրենց հերթին, մեր մկանները լիցքավորում են թթվածնով և էներգիայով:

Ընկույզ
Տրամադրության համար

Ընկույզը հարուստ է տրիպտոֆան ամինաթթվով, որն անհրաժեշտ է սերոտոնինի արտադրության համար: Իսկ սերոտոնինը տրամադրությունը բարձրացնող հորմոն է, որն օգնում է դիմակայել սթրեսին:

Ծնեբեկ
Տրամադրության համար

Նիզականման բանջարեղենը հարուստ է վիտամին B-ով, որն օգնում է օրգանիզմին չթուլանալ: Ծնեբեկի մեջ առկա նյութերը կարևոր են դոպամինի և սերոտոնինի սինթեզման համար, դրանք, իրենց հերթին, բարձր տրամադրության ստեղծման առաջնահերթ հորմոններից են:

Կանաչ սխտոր
Քաշի նվազեցման համար

Կանաչ սխտորը, սպիտակի համեմատ, ավելի նուրբ համ ունի և ավելի հարմար է տարատեսակ աղցաններում օգտագործելու համար: Յուրահատուկ համն ու հոտը պայմանավորված է ալիցինով, որն օգնում է ուղեղում հագեցվածության ազդակների շուտ առաջացմանը, ինչն էլ հետ է պահում չափից շատ ուտելուց:

Լոբազգիներ
Քաշի նվազեցման համար

Եթե ցանկանում եք նիհարել, ապա լոբազգիները լավ տարբերակներից են: Օրգանիզմը, մարսողության ընթացքում, փորձելով հասնել լոբազգիներում առկա մանրաթելերին՝ մեծ աշխատանք է կատարում, այսինքն՝ կալորիաներ է ծախսում դրանք մարսելու համար:

Բացի այդ՝ լոբազգիներում առկա պրոտեինը ևս ակտիվացնում է ուղեղում «ես հագեցել եմ» ուղերձը:

Համացանցից

ՇԱՀԱՍՊՐԱՄ ԿԱՄ ՌԵՀԱՆ

Ռեհանը շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող միամյա բույս է: Ցողունն ուղղաձիգ է, քառանիստ, մինչև 40-80 սմ բարձրությամբ: Արմատն առանցքային է, բազմաթիվ կողային ճյուղավորումներով: Ծաղիկները՝ սպիտակ, ծիրանագույն կամ բազմերանգ են՝ հավաքված ճյուղերի գագաթային մասում գտնվող հասկանման ծաղկաբույլերում: Պտուղը պարունակում է 4 կլորավուն սերմեր, որոնք ծածկված են ամուր, մուգ գույնի թաղանթով: Բազմանում է բացառապես սերմերով, ջերմասեր և խոնավասեր բույս է:

Սենյակային պայմաններում սերմը պահպանում է ծլունակությունը՝ մինչև 5 տարի: Բնության մեջ բազմանում է ինքնացան եղանակով:

Տարբերում են ռեհանի 2 հիմնական տեսակ՝ կամֆորային և էվգենոլային: Կամֆորայինի (Ocimum menthifolium) տերևները նման են դաղձի, հարուստ են կամֆորայով: Բնության մեջ տարածված են Հյուսիս-արևելյան Աֆրիկայում և Արաբական թերակղզու լեռնային շրջաններում: Երկրորդ տեսակը (O. gratissumum) պարունակում է էվգենոլ, մետիլխավիկոլ, նաև կամֆորա և բույսին բնորոշ եթերային յուղ՝ օգիմել:

Կարծիք կա, որ էվգենոլային ենթատեսակը ստացվել է դաղձատերևային և երևանյան տեսակների խաչաձևումից: Երևանյան տեսակը լայնորեն մշակվում է Ռուսաստանի Դաշնության հարավային մարզերում: Մեր էնդեմիկ ռեհանի տերևները կապտամանուշակագույն են, բուրմունքը նման է բուրավետ պղպեղի և թեյի խառնուրդին:

Ռեհանը հնագույն ժամանակներից հայտնի է եղել նաև Արևելքի ժողովուրդներին: Հնդկաստանում ռեհանն անվանում են «սրբազան բույս» («տուլսի»), լատիներեն անվանումն է՝ O.basiliqum՝ այսինքն՝ «արքաներին արժանի բուրմունք»:

Սերբ բուժարարները խորհուրդ են տալիս ռեհանն օգտագործել ցանկացած տեսակի վարակների դեպքում՝ ուղղակի պետք է սեղանի վրա միշտ թարմ ռեհան լինի: Ուկրաինայում ռեհանը կախել են առաստաղներից:

Ներկայումս մեծ կիրառություն ունի Իտալիայում: Մշակվում է ո՛չ միայն սննդի մեջ օգտագործելու նպատակով, այլև՝ կամֆորա և էվգենոլ ստանալու համար: Ռեհանից ստացվող եթերային յուղը վաճառվում է դեղատներում: Խորհուրդ է տրվում կիրառել՝ բրոնխիտի, գրիպի, մրսածության և գլխապտույտի, գլխացավի, միգրենի, դեպրեսիայի, նյարդային հոգնածության, տագնապի, ուշագնացության և մագաթափության դեպքում:

Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում են թարմ և չորացրած տերևները, ծաղիկը, սերմը: Տերևը հարկ է հավաքել ծաղկման շրջանում, չորացնել օդափոխվող ծածկի տակ, ցանկալի է ոչ լուսավոր տարածքում, որպեսզի գույնը պահպանվի:

Ռեհանը լայնորեն օգտագործվում է տարբեր ժողովուրդների ազգային խոհանոցներում: Չորացրած տերևի փոշին փոխարինում է բուրավետ պղպեղին և վանիլինին: Մարդիկ հնագույն ժամանակներից նկատել են, որ թարմ բույսի բուրմունքը խթանում է մտավոր ակտիվությունը, ամրացնում նյարդային համակարգը, լավ աֆրոդիզիակ է: Թարմ տերևն ավելացնում է կերակրող մայրերի կաթը, օգտակար է վիրուսային համաճարակների, մալարիայի դեպքում: Լավացնում է շնչառությունը, ախորժակը և մարսողությունը, մեղմացնում է ատամի ցավը: Ռեհանն օգտակար է ասթենիայի դեպքում:

Զգուշացում. *Խորհուրդ չի տրվում ռեհան օգտագործել հղիներին, արյան բարձր մակարդելիության և ստամոքսի խոցի դեպքում:*

Խորհրդատվություն

ԱՅՑ՝ ԹԵՂԵՆԻՔ

Կոտայքի մարզում շուտով կսկսվի վար ու ցանքի, բանջարաբոստանային մշակաբույսերի սածիլի աշխատանքները: Ըստ գյուղացիների, այս տարի գարնան գյուղատնտեսական աշխատանքներն ավելի վաղ կսկսվեն, ասում են, թե տարին առաջ է, եղանակը՝ բարենպաստ: Ելնելով դրանից, Կոտայքի ԳԱՄԿ-ի աշխատակիցներն արդեն սկսել են շրջայցերը մարզի համայնքներ:

Հերթական այցը Թեղենիք համայնքում էր, որտեղ՝ ԳԱՄԿ-ի 2015 թվականի գործունեության աշխատանքային պլանի համաձայն, նախատեսված էր սեմինար: Այն անցկացնում էր Թեղենիքի գյուղատնտեսության խորհրդատու Հովհաննես Գասպարյանը: Ներկա էին՝ համայնքի ղեկավարը, ֆերմերներ, ԳԱՄԿ-ի մասնագետները:

Հ. Գասպարյանը մանրամասնեց կոոպերացիայի սկզբունքով աշխատանքների վարման, կոոպերացիայի կառավարման մեխանիզմների հետ կապված խնդիրները:

ԳԱՄԿ-ի մասնագետ Գ. Ավետիսյանը ներկայացրեց կենդանիների վարակիչ հիվանդությունները, իսկ մասնագետ Մ. Ղազարյանը՝ պետության կողմից օժանդակվող ծրագրերը. մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով՝ պետական աջակցության, «Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման» ծրագրերի, ինչպես նաև (2007-2015 թթ.) ծրագրի, Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման, «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» կարգի համաձայն՝ գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով, պետական աջակցության վերաբերյալ նյութեր:

Սեմինարի ավարտին մասնակիցներին տրամադրվեցին գյուղատնտեսական թեմաներով խորհրդատվական թերթիկներ:

Նարինե Անդրեասյան
Կոտայքի ԳԱՄԿ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ագրոլրատու»
թերթի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատրպաշտ» կազմակերպությունները

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 18
ստորագրված է տպագրության 16.03.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա